Կ. ՊՈԼՍԻ «ԱՐԵՎԵԼՔ» ՕՐԱԹԵՐԹԸ
(1880-ական թվականներ)

ԳԱՅԱՆԵ ՍՈՂՈՄՈՆՅԱՆ

1880-ական թվականներին Կ. Պոլսի «Արևելք» օրաթերթին վիճակվել էր նոր փուլ սկսել պոլսահայ լրագրության մեջ: Բեռլինի կոնգրեսից հետո Եվրոպայի ու Ռուսաստանի օգնությամբ Արևմտյան Հայաստանի բարենորոգումների հույսերը սպառած՝ արևմտահայ ազատամտությունն իր ուշադրությունը պետք է սևեռեր Արևմտյան Հայաստանի կացության վրա: Հայ բնակչության կենցաղը, բարքերը, բարոյական ու մտավոր վիճակը դառնում են հատուկ բնագավառներ, որտեղ ազգային ինքնաճանաչողության խնդիրը պետք է իրականացներ հատկապես առաջադեմ մտավորականությունը: Գավառի իրական կացության արտացոլումը, հայ մարդու կենսական միջավայրը, նրա գործելու պայմաններն ու կարելիությունները դառնում են ոչ միայն նորահաստատ ռեալիստական գրականության, այլև լրագրության հետաքրքրությունների գլխավոր առարկան: «Արևելքը»՝ որպես նոր տեսակի լրագիր, մեծապես ընդլայնեց արևմտահայ մամուլի լրատվության շրջանակները, այսինքն՝ արեց այն, ինչ արել էր 1870-ական թվականներին «Մշակը» արևելահայ իրականության մեջ: Սակայն 1880-ական թվականներին Օսմանյան Թուրքիայում քաղաքական իրադրությունն այն չէր, ինչ նախորդ տասնամյակին, երբ օսմանյան՝ թեկուզ և թույլ ազատամտությունը, ի դեմս «նոր օսմանների», ինչ-որ ճեղքեր էր բացել գրեթե միշտ ամենազոր գրաքննական պատվարի մեջ: 1880-ականների սկզբներից նկատելի դարձան գրաքննական խստությունների վերակենդանացումը և ծավալումը, գրաքննության ենթարկումը ոստիկանությանն ու սուլթանական պալատին, որոնք նոր հանգույցներով պետք է կաշկանդեին մամուլն ու նրա գործունեությունը: Դրան համապատասխան, լրագրական լուսաբանումն ու լրատվությունը պետք է ստանային ժանրային դրսևորման առավել զուսպ ձևեր, ավելի ցուցադրող, քան հարձակվող, ավելի ակնարկող, քան քննադատող, ավելի շատ ուշադրություն հրավիրելով ոչ թե պատճառների, այլ հետևանքների վրա: Համիդյան բռնակալությունը լրագրությանը պարտադրում էր ճկունություն և համբերատարություն, ուղիղ խոսքի և ընդհանրացման փոխարեն՝ ակնարկներ, քրեական (բայց բնավ ոչ քաղաքական) երևույթների պատկերներ: Բռնակալության պայմաններում ինքն էլ գտնվելով համանման կացության մեջ՝ ընթերցողը հասկանում էր լրագրության երկիմաստ վիճակը՝ խորհելով նշված հետևանքները ծնող պատճառների մասին:

Լրագրական նյութի մշակումը թելադրում էր նոր ժանրերի մշակման անհրաժեշտություն: «Արևելքի» էջերում զուտ լրատվության զարմանալի ընդարձակ-

ման հետ իրենց հաստատուն տեղն են գրավում քրոնիկի ժանրը (որ կարելի է, թերևս, կոչել ժամանակագրական էսսե), ակնարկը և ուղեգրությունը: Այս օրաթերթում հայտնվեց, կարելի է ասել, ազգային տեսության ժանրը, իբրև խմբագրական, որտեղ թերթի տնօրինությունը ձգտում էր մշտապես հավասարակշռություն ստեղծել ազգային իրականության իր գնահատման և օսմանյան բռնակալության աչալրջության միջև ընթացող սեփական ուղեգծում:

Որպես սեփականատիրական ձեռնարկ, «Արևելքը» կտրուկ տարբերվում էր արևմտահայ նախորդ բոլոր թերթերից ու հանդեսներից: 1880-ական թվականներից այն հրատարակվում էր բաժնետիրական սկզբունքներով՝ մի խումբ հարուստների դրամագլխով, որ նյութական անկախություն էր ապահովում թերթի համար: «Արևելքի» վարչության ուներոր անդամները, որոնցից էին Կ. Սվաճյանը, Հ. Նորատունկյանը, Ստ. Տամատյանը և ուրիշներ, վերահսկում էին թերթի քաղաքական ընդհանուր ուղղությունը: Սրանց գործարար կապերի ու առնչությունների շնորհիվ ապահովվեց մշտական գովազդը (թերթի եկամուտների կարևոր աղբյուրը), ինչպես և իշխանությունների բարյացակամությունը: «Արևելքի» վարչության կողքին և նրա հետ միաժամանակ գործում էր նրա խմբագրական կազմը, որի մեջ ընդգրկված էին տաղանդավոր մի շարք հրապարակախոսներ և լրագրողներ՝ Ա. Արփիարյանը, Գր. Զոհրապը, Լ. Բաշալյանը, Բ. Քեչյանը, Տ. Կամսարականը, Ե. Տեմիրճիպաշյանը և ուրիշներ: Գրական-հրապարակախոսական այս ուժերն էին, որ, Գր. Զոհրապի խոսքերով, սկիզբ դրեցին Կ. Պոլսի նոր լրագրությանը[1], և որոնք, ի հակադրություն «Արևելքի» վարչության պահպանողականների, թերթին տվեցին ժողովրդավարական ուղղություն: 1880-ական թվականներին «Արևելքի» ընթացքի մեջ նկատելի է գաղափարական երկվությունը. զուսպ և չափակշռված խմբագրական տեսություններին, որոնք տպագրվում էին թերթի 1-ին էջում, հետևում էին նրա 2-րդ և 3-րդ էջերում զետեղվող՝ ժողովրդավար լրագրողների նյութերը, համարձակ, թափանցող և իրականության ամենատարբեր բացահայտումներով: Այս աշխատակիցներն էին տնօրինում «Արևելքի» և՛ լրագրական, և՛ գեղարվեստական նյութերի սյունակները՝ սկսած վեպից ու նորավեպի տարածվող ժանրից և վերջացրած քրոնիկով, ակնարկներով, թղթակցություններով ու հոդվածներով: Ուշագրավ է վարչական խորհրդի կողմից թերթի ընդհանուր ուղղությանը տրված բնութագիրը: Շեշտվում է, որ «Արևելքը» նախընտրելու է այնպիսի գաղափարներ, որոնք ընթերցողին պետք է կողմնորոշեն երկրի բարեփոխումների, տնտեսության և քաղաքականության զարգացման հարցերում առհասարակ: Վարչությունը թերթը հռչակում էր առաջադիմական՝ առանց արմատականության, պահպանողական՝ առանց հետադիմականի սահմանները մտնելու[2]: «Արևելքի» ազատամիտները կրում էին Հ. Սպենսերի փիլիսոփայության զգալի ազդեցությունը: «Պահպանողականություն» ասելով նրանք հասկանում էին կառավարման կենտրոնացած ձև, որ ենթադրում էր տեղերի ընդամենը սահմանափակ ինքնուրույնություն, առավել գավառին, քան քաղաքին պատշաճող: Ազատականությունը, Սպենսերի

---

[1] Ա. Ա լ պ ո յ ա ճ յ ա ն. Գրիգոր Զոհրապ, Կ. Պոլիս, 1919, էջ 57:

[2] «Արևելք», 1884, 16 հոկտեմբերի:

այս հետևորդների կարծիքով, առավել մեծ չափերով է համապատասխանում քաղաքի, ասել կուզի՝ արդյունաբերական զարգացման շահերին: Թերթի ազատամիտները կողմնակից էին անհատի գործունեության սահմանների ընդլայնմանը[3] և ոչ ավելին: Ծայրահեղ ազատականությունը, ըստ «Արևելքի» վարիչների, տանում է դեպի հեղափոխականություն, որը լարված վիճակի մեջ կդներ Եվրոպան ու կկասեցներ հասարակական զարգացումը: Ճիշտ նույն կերպ ծայրահեղ պահպանողականությունը կխոչընդոտեր քաղաքակրթության զարգացման ընթացքը՝ ի վերջո անշարժության դատապարտելով այն: Հետևաբար, ազատամիտները նախընտրում էին չափավոր հավասարակշռությունն այս երկուսի միջև՝ իբրև օրինակ բերելով Անգլիան, Շվեյցարիան ու Շվեդիան:

Թերթի քաղաքական տեսությունների այս բովանդակությանը հակառակ, նրա մյուս նյութերը, որ վերահսկում էին երիտասարդ ժողովրդավարները, ունեին շատ ավելի լայնախոհ ուղղվածություն: Որքան էլ արևմտամետ լինեին «Արևելքի» վարիչները, հեռու՝ ազգային ինքնորոշման որևէ ձգտումից և կամ դրան հակառակորդ, այդուհանդերձ, նրանց ազատամտությունը ենթադրում էր ժողովրդի կյանքի ու կենցաղի, բարքերի, մտավոր ու բարոյական վիճակի լուսաբանումը գրաքննության շրջանակներում (ինչից նրանք առանձնապես գոհ չէին): Անշուշտ, ժողովրդավարների հետ ազատամիտների համագործակցությունն առաջին հերթին պայմանավորված էր հպատակ ժողովուրդների նկատմամբ օսմանյան պետության վարած քաղաքականությամբ, համիդյան բռնակալության ծավալման բնույթով և հատկապես հայերի հանդեպ բռնությունների սաստկացմամբ: Դրանք պետք է խորացնեին անջրպետը «Արևելքի» պահպանողականների ու հրապարակախոսների միջև, ինչը և 1880-ական թվականների վերջերին պետք է հասցներ պառակտման ու համագործակցության վերջնական լուծարման: «Արևելքը», և ավելի ցայտուն՝ «Մասիսը» (որ 1884-ին նույնպես հանձնվել էր «Արևելքի» վարչությանը)[4], արտացոլել են կողմերի այս մերձեցումներն ու հակասությունները: Իսկ մինչ այդ, մինչև 1888–1889 թթ. «Արևելքը» արևմտահայ մամուլում ներկայացնում էր տարբեր գաղափարների ու կողմնորոշումների մի միավորում, և հենց այս հակադրության մեջ պետք է իրենց առաջավոր դիրքորոշումը հաստատեին նրա տաղանդավոր հրապարակախոսները, լրագրողներն ու գրողները, որոնց գործունեությանն էր պարտական «Արևելքը» իր հասարակական լուրջ ազդեցության համար:

«Արևելքի» ժողովրդականությունը մեծապես ապահովել է Ա. Արփիարյանը, որը թերթում Հրազդան *ստորագրությամբ հանդես էր գալիս իր «Օրվան կյանքը» քրոնիկներով, գրական ու հասարակական բնույթի տարբեր հոդվածներով ու հրապարակումներով: «Օրվան կյանքը», փաստորեն, լրատվական ու վերլուծական բնույթի՝ քրոնիկի ժանրն էր հայ լրագրության մեջ: Հաճախ այն անդրադարձ էր այս կամ այն իրողությանը, փաստին, ազգային-վարչական մարմինների գործունեությանը, եկեղեցուն, մասնավոր ու մշակութային կյանքին՝ ներդաշնակ ձ-*

---

[3] *«Արևելք», 1884, 26 հոկտեմբերի:*

[4] *Տե՛ս* Ա. Խ ա ռ ա տ յ ա ն. *Արևմտահայ մամուլը և գրաքննությունը Օսմանյան Թուրքիայում, Երևան, 1989, էջ 246:*

նի մեջ, ոչ ծավալուն նյութով, բայց միշտ հրատապ ու հետաքրքրաշարժ: Փոքր ձևի մեջ Հրագդանը կարողանում է անել ինքնատիպ ընդհանրացումներ, մասնակի երևույթի մեջ հայտնաբերել կարևորն ու բովանդակալիցը: Քրոնիկներում միմյանց հաջորդում էին պոլսահայ մշակույթի ու մտավոր կյանքի գործիչները, դպրոցները, կրոնավորներն ու գրողները և այլն: Այս քրոնիկների առանձին հատվածները, սակայն, մեկուսի չեն, այլ միավորվում են ներքին կապով կամ թեմատիկ և կամ էլ իրենց տրամաբանությամբ ու տրամադրությամբ: Այսպես, քրոնիկների մի խմբում Արփիարյանը բացահայտում է պոլսահայ կին գործիչների տաղանդն ու ժողովրդանվեր գործունեությունը. կենդանի ու շոշափելի գծերով են ներկայացված Նազլը Վահանյանը, նրա կազմակերպած «Խնամակալ» ընկերությունը Օրթագյուղում, որին հետևում է սահուն անցումը դերասանուհիներ Մարի Նվարդի ու Աստղիկի դիմանկարներին՝ շոշափելի գծերով[5]: Քրոնիկների մեկ այլ խմբում Արփիարյանը բանավիճում է ռոմանտիկ գրականության նորօրյա պաշտպանների հետ՝ հիմնավորելով ռեալիզմի պարզությունն ու անկեղծությունը: Թեթևակի քննադատվում է Ատոմ Տեմիրճիպաշյանը՝ ճոռոմաբանության և պաթետիկ հակումների համար: Ապա քննադատությունն անցնում է ռոմանտիկ զգացմունքայնությամբ համակված մի գրողի, ի դեմս որի, ժամանակի պոլսահայ ընթերցողը, հավանաբար, ճանաչել է կոնկրետ անձի, որի «ապառաժներ լացացնող» կրքերն է ցուցադրել լրագրողը[6]: Նկատենք, որ Արփիարյանը կողմնակից է զգացմունքների բազմակողմանի բացահայտմանն իրենց բնականության, իրական մարդկային դրամայի մեջ գրողի ներթափանցելու սկզբունքներին: Քրոնիկներում հերթագայում են իրական դեպքն ու խորհրդածությունը, փաստերն ու դրանց ներքին տրամաբանությունը: Քրոնիկների մի այլ հրապարակման մեջ Արփիարյանն անդրադառնում է Կ. Պոլսի և արևելահայ մշակութային ու դպրոցական խնդիրներին՝ ի հայտ բերելով իր քննադատական մոտեցումները: Անդրադառնալով Էջմիածնի Գևորգյան ճեմարանի տեսչի խնդրին՝ Արփիարյանը քննադատում է անպայման հոգևորականներից տեսուչ ընտրելու մտայնությունը: Սինոդի առաջարկած թեկնածուները շնորհալի աստվածաբան են, քարոզիչ և բանաստեղծ, բայց ոչ մանկավարժ: Եվ այդ այն դեպքում, երբ կովկասաբնակ հայերի մեջ այդքան շատ են ընտիր մանկավարժները, գրում է նա[7]:

Քրոնիկներում Արփիարյանը հաջողությամբ է ներկայացնում իր ժամանակակիցների դիմանկարները: Արդեն պոլսահայ մամուլում տարածվել էր նոր ժանր՝ երևելի հայերի կենսագրական դիմանկարների ժանրը, որ բավական հաջողությամբ իր զարգացումն էր ապրում նաև «Արևելքի» էջերում: Արփիարյանը ցույց էր տալիս նաև դրան ուղեկցող աղավաղումները՝ ոչ նշանակալի, հասարակական ու ազգային կարևորությունից զուրկ կենսագրությունների հրապարակումները, կենսագրական ավելորդ մանրամասների մեջ խորանալը և այլն: Նա նկատում էր, որ երկտող գրող ամեն մի երեխա ցանկանում է, որ «տիեզերքն իրմով հետաքրքրվի»: Հաջողված նմուշներ են Գր. Արծրունու, թատերախոս Հ. Խո-

---

[5] *«Արևելք», 1884, 21 հուլիսի:*

[6] *Նույն տեղում:*

[7] *«Արևելք», 1884, 28 հուլիսի:*

բասանճյանի, Ն. Վարժապետյանի, Ռաֆֆու, այլ մտավոր ու մշակութային գործիչների կենսագրությունները: Արփիարյանն այստեղ կարևորում է դիմանկարի ճշմարտացիությունը, իսկ քրոնիկը, նրա կարծիքով, «ի մի կձուլե զվարթն ու տխուրը, վասնզի կներկայացնե կյանքն ինչպես որ է»[8]: Արփիարյանը, ի դեպ, Հ. Խորասանճյանի մասին ասում է, որ նա Փարիզի մամուլում տարիներ ի վեր հանդես էր եկել այդ ժանրի փայլուն հրապարակումներով:

«Արևելքի» լրագրողների նյութերը մեկ անգամ չէ, որ հակադրվել են վարիչների քաղաքական բարեհուսության ու համակերպման ուղեգծի հետ: Վերջիններս իրենց սեփական չափավորությունը հրամցնում էին իբրև առհասարակ ազգի քաղաքական չափավորություն, իսկ ազգային ինքնության ձգտումների հանդեպ սեփական բացասական դիրքորոշումը՝ իբրև ազգին յուրահատուկ հատկանիշ: Հայերը, ասվում է թերթի քաղաքական տեսություններից մեկում, «որչափ ալ բազմաթիվ լինեն մասնավոր գավառի մը մեջ, կամ որչափ ալ հարստություն ու խելք ունենան... այնչափ գործնական ժողովուրդ մ'են, որ կարելի չէ երկյուղ ունենալ, թե իրենց դիրքեն ու առիթներեն օգուտ պիտի քաղեն քաղաքական օդային ձգտումներ սնուցանելու համար... Հայք ամեն բանե առաջ նյութական վիճակի լավություն ու ապահովություն կփնտրեն և ցորչափ վայելեն զանոնք, իրենց քաղաքական վիճակին վրա մտածելու անգամ ախորժ չեն ունենար, թող թե իրենց հատուկ խորհուրդներ հղանալու»[9]:

Իշխանություններին գոհացնելու այս ակնհայտ ճիգերին հակառակ, Արփիարյանն «Արևելքում» տպագրում էր Ռաֆֆու «Խամսայի մելիքություններ» պատմական աշխատությունը[10]՝ համառոտելով և արևմտահայերենի վերածելով, միջարկություններ կատարելով, տեքստը ընդհատելով, բացատրություններ տալով և այլն, ինչը թելադրված էր գրաքննական նկատառումներով և բնավ չի խանգարել հեղինակի՝ ազատագրական պայքարի գաղափարի ցուցադրմանը: Վերոհիշյալ քաղաքական տեսությունը հերքելու այլ տպավորիչ ձև Արփիարյանը, թերևս, հազիվ թե գտներ:

«Արևելքի» թղթակցություններն ու լրատվական այլ նյութերն անգնահատելի տեղեկություններ են պարունակում ժամանակի ազգային իրականության, գրականության, արվեստի, հասարակական կյանքի, լրագրության ու նրա գործիչների և այլնի մասին: Դրանք իրենց ազդեցությունն էին թողնում ոչ միայն ընթերցողի վրա, ընդլայնում «Արևելքի» ժողովրդականությունը, այլև գավառական թղթակիցների վրա, նրանց թեքում ժողովրդավարական հունով: Իսկ արծարծած թեմաներով և հատկապես քննադատական հայեցվածքով թերթն իր թարմ մտածողությունն էր հանդես բերում արևմտահայ մամուլում: Ունենալով առաջադեմ աշխատակիցներին միավորող իր ուղղությունը՝ «Արևելքը» հատկանշվում էր թեմաների բազմազանությամբ, գրական ու ստեղծագործական անհատականության տեր հեղինակներով: «Արևելքի» գավառական թղթակիցներն անմիջականորեն գրում էին հայ գավառի կյանքի մասին՝ ըստ հնարավորին համընթաց

---

[8] *«Արևելք», 1884, 15 հոկտեմբերի:*

[9] *«Արևելք», 1885, 27 փետրվարի:*

[10] *Տե՛ս «Արևելքի» 1884 թ. հունվար-փետրվար ամիսների համարները:*

գնալով թերթի ընդհանուր, հայրենագիտական ու ճանաչողական ուղղությանը, ձգտելով ցույց տալ հայաբնակ գավառների ճշմարտացի նկարագիրը, նրա բնակիչների առօրեական կապերն ու հարաբերությունները[11]: «Գավառների կացությունը ճշտիվ, առանց սեթևեթի և առանց անձնականությանց խնդիրներու պետք է ծանոթանան ընդհանուր ազգին և այս պետք է լինի գլխավորապես գավառացի թղթակիցներու պաշտոնն»[12],– գրում էր թերթը մի առիթով:

Հայաբնակ գավառներն «Արևելքում» ներկայացվում են երկու հիմնական նկարագրով. թղթակցությունների մի մասն ունի ընդհանուր բնույթ, արձանագրում է ընդհանուր վիճակը՝ առանց բացատրությունների կամ մեկնաբանությունների: Իսկ մյուս՝ ոչ պակաս ստվար խումբը վերհանում է գյուղի կամ գավառական քաղաքի սոցիալական դեմքը՝ իր որոշակիությունների մեջ, ազգային ու տնտեսական կեղեքումներով, անգամ հարստահարությունների հստակ մատնանշումներով: Այստեղ կա գրեթե ամեն ինչ՝ առանց քննադատության, որի կարիքը, թերևս, չի էլ զգացվում, որովհետև պատկերները բաց են, նույնիսկ մերկապարանոց: Հիմնականում ներկայացվում են չարիքի սոցիալական ու բարոյական հետևանքները, և, հավանաբար, այս է պատճառներից մեկը, որ գրաքննիչներն այս կարգի նյութերի վրա ուշադրություն չեն դարձրել: Կար նաև մեկ այլ պատճառ, որի մասին ասվեց վերը. «Արևելքի» վարիչներն ազդեցիկ մարդիկ էին և սրանց հեղինակությունն իշխանությունների առջև՝ հազիվ թե բացառվեր: Կարելի է կարծել, որ այս հանգամանքը ևս նշանակություն է ունեցել, որ «Արևելքի» լրագրողներն ավելի ազատ գրիչ շարժեն՝ իրենց մյուս գործընկերների համեմատությամբ:

Թերթը հատկապես կանգ է առել գավառաբնակ հայերի տնտեսական դժվարին դրության վրա: Մի թղթակցության մեջ ցույց է տրվում Վանի ու նրա շրջակայքի հայության առևտրատնտեսական անկյալ վիճակը: Ուշագրավ է նրանց մոռացված լինելու բացահայտումը. չի գործում Արածանու խարխլված և փլուզված կամուրջը, որովհետև տեղի իշխանություններն անտարբեր են այն նորոգելու նկատմամբ[13]: Այստեղ քննադատություն չկա, կա պարզ բացատրություն, որը համարժեք է նույնիսկ հասցեագրված քննադատության: Ճանապարհազրկությունը, գյուղատնտեսական հումքի արտահանման դժվարությունները բացառում են իրացման շուկան, ուստի և պանդխտության զգալի հոսք է նկատվում Վանից ու շրջակայքից, իրավացիորեն եզրակացնում է թղթակիցը:

Երբեմն «Արևելքը» չի բավարարվում սոսկ նկարագրական-թռուցիկ թղթակցություններով և վերստին անդրադառնում է նույն գավառին: Այսպես, 1884 թ. ապրիլի 27-ին տպագրած իր մի թղթակցությունը՝ Երիզայի հայերի կացության բավական հարևանցի նկարագրությամբ (պատմական ակնարկ, տեղագրություն, բնակլիմայական պայմաններ), թերթը լրացրել է սոցիալական արժեք ունեցող

---

[11] Տե՛ս Է. Կ ո ս տ ա ն դ յ ա ն. Կոստանդնուպոլսի «Արևելք» օրաթերթը, Երևան, 2003, էջ 16-17: Այս աշխատությունն առաջինն է, որն արժեքավորում է «Արևելքի» մի քանի հիմնական թեմաներ՝ հայ մամուլի պատմության տեսանկյունից:

[12] «Արևելք», 1885, 27 փետրվարի:

[13] «Արևելք», 1884, 27 ապրիլի:

մի նոր հրապարակումով: Այստեղ ցույց է տրվում, որ Երիզայում քրդական հարստահարությունների հետևանքով այդ գավառի Էսպեվերեկ հայկական գյուղը հողազրկվել է, և որ այդ խնդրին միջամտել է պատրիարքը[14]:

Քրդական հարստահարությունների թեման է բարձրացվել նաև Չարսանճագի գավառի հայությանը նվիրված մի թղթակցության մեջ: Այդ գավառի «բոլոր մշակովի հողերն ավատական պեյերու կպատկանին»[15],- նշում է թղթակիցը: Փաստական տվյալներով հագեցած այս թղթակցության մեջ ցույց է տրվում, որ տուրքերից և եկամուտներից այս գավառում գոյանում է 870 հազար ղուրուշի ընդհանուր գումար, որից միայն 180 հազարն է տրամադրվում նրա կարիքների բավարարմանը: Մնացածը տնօրինում է Գոզաթում գտնվող նահանգական կենտրոնը: Թղթակիցը զանց չի առնում նաև երկպառակությունների փաստը Չարսանճագում. պատճառը վարչական (իդարեի մեջլիսի) և նախադատ (բեդայեթ) ատյաններին անդամակցելու ձգտումն ու մրցակցությունն էր հայ ունևոր խավի մեջ, որ «զարմանալի կերպով կհուզե այս ժողովրդյան գլխավորաց ուղեղը»[16]:

Հանրային երկպառակությունների բացահայտմանն ենք հանդիպում «Ռոդոստոյի ազգային վիճակը» թղթակցության մեջ: Այստեղ ընդհարվել են շատ ավելի ուժեղ և առաջնորդի աջակցությունը վայելող ամիրայական *կուսակցությունը և հասարակ ժողովրդի անունից հանդես եկող երիտասարդների խումբը: Գավառական ժողովում առաջինի ներկայացուցիչներն են, որոնք էլ տնօրինում են տեղի ազգային-եկեղեցական գործերը[17]: Սոցիալական հակադրություններին է անդրադարձել նաև մի այլ թղթակից՝ Տիգրանակերտից, որը տեղի հարուստներին բնութագրում է իբրև կազմակերպված մարդկանց մի խումբ, «որք ոչ ազգային օրենք գիտեն և ոչ ալ փափաք ու կամք՝ գիտնալու և հետևելու. այսպիսյաց օրենք իրենց կիրքն ու կամքն է»[18]: Ընդ որում, առաջնորդը մեկուսացվել էր սրանց կամայականությունների հետևանքով:*

Հայաբնակ գավառներում վաշխառության երևույթի տարածումը թերթը համարում է սոցիալական աղետների պատճառներից մեկը: Որպես կանոն, պարտքը վճարվում էր բնամթերքով՝ յուղով, ոչխարով, բերքով և այլն, իսկ տոկոսները (դրամի վերածած) հասնում էին 40-100-ի: Քիչ չէին այն դեպքերը, երբ գյուղացին հարկադրված էր լինում ցանածը դեռ կանաչ վիճակում վաճառել և զրկվել բերքից, որով ձմռանն ապրելու էր իր ընտանիքը: «Այս դրությունն շղթայաբար շարունակությամբ կհաջորդե տարվետարի, բավական է, թե մի տարի սկսի երկրագործ մը, զի այլևս չկրնար ազատիլ բնավ»[19],– եզրակացնում է թղթակիցը:

Բնականաբար, վաշխառուին տարիներ շարունակ բերքը վաճառելով և ածող տոկոսները այդպես էլ մարելու անկարող գյուղացին, ի վերջո, պետք է չնչին

---

[14] *«Արևելք», 1884, 21 օգոստոսի:*
[15] *«Արևելք», 1884, 25 օգոստոսի:*
[16] *Նույն տեղում:*
[17] *«Արևելք», 1885, 9 մայիսի:*
[18] *«Արևելք», 1888, 23 մարտի:*
[19] *«Արևելք», 1884, 14 մայիսի:*

գնով նրան վաճառեր իր հողը և կամ էլ հանձներ այն պարտքի դիմաց: «Արևելքի» թղթակից Գեղամն այդպիսի բազմաթիվ գյուղերի մեջ հիշատակում է Մշո Խորունք կամ Խորնի՝ «Խորենացիին գյուղը»[20]:

«Արևելքի» հեղինակավոր թղթակից Հ. Տուտուխյանը (աշխատակցում էր նաև «Մասիսին») «Հայ գյուղացիի խորհրդավոր կողմերը» հոդվածում ազգագրական բնույթի մի շարք հետաքրքիր տեղեկություններ տալուց հետո դրա շարադրանքը հագեցնում է վաշխառուին բնութագրող ժողովրդական դիպուկ խոսքով. «Հ. Խ. աղան սև օձ եղավ, կըսեն Բաղեշի բոլոր գեղեր: Աղան այս գեղերու վաշխառուն էր, տգրուկը, գոռեխը»[21]:

Թերթում տեղ են գտել ոչ միայն քրդերի, այլև թուրքերի բռնությունների մասին վկայող փաստեր. նկարագրելով Քյոթահիայի հայերի նյութական ու բարոյական թշվառությունները՝ թղթակիցը գրում էր, որ հայերը պառակտվել են երկու մասի՝ իրենց առանձին եկեղեցիներով և տեղի են տալիս թուրքերի բռնություններին[22]: «Արևելքը» բացահայտում է հայաբնակ գավառների այլևայլ աղետները՝ դավանափոխությունը, սովը, պանդխտությունը և այլն, որոնք թշվառացնում են տեղաբնակ ժողովրդին: Լրագիրը նրանց վրա էր հրավիրում հայ եկեղեցու, պատրիարքարանի և ազգային գործիչների ու ընկերությունների ուշադրությունը, առաջարկում ինչ-ինչ պայմաններ ստեղծել գյուղացու տնտեսական վիճակը թեթևացնելու համար: «Փյունիկ» ստորագրությամբ թղթակիցը կարծում է, որ դրան կնպաստեին գյուղում «փոխառության կանոնավոր սնտուկների հիմնումը և տոկոսի կայուն և մատչելի չափեր հաստատող օրենքի ընդունումը»[23]: Թերթի մի ուրիշ թղթակից առաջ էր քաշում գավառների մեջ ինքնօգնության հաստատությունների ստեղծումն ու տարածումը, արհեստագիտական վարժարանների հիմնումը, դրանց ֆինանսավորման խնդիրների լուծումը և այլն[24]: Ոչ պակաս կարևոր է համարվում գավառական առաջնորդների անձնվեր գործունեությունը:

Գավառի իրավիճակի վերաբերյալ հոդվածներում «Արևելքի» քննադատությունը երբեմն ստանում է քողարկված տեսք, երբ նրա խոսքը հասցեագրվում է Բ. Դռան տնտեսական քաղաքականությանը: Թերթն այս դեպքում դիմում է հետևանքները ցուցադրելու՝ իր նախասիրած գործելակերպին: 1888 թ. սկզբներին կառավարությունը բարձրացրել էր թեմեթյուի *տուրքը (եկամտահարկ)՝ իր բյուջեի ճեղքվածքի հետագա խորացումը կասեցնելու նպատակով: «Արևելքն» այս առթիվ գրում է, որ տուրքի բարձրացումն առավելապես ծանրանալու է աղքատ և միջին խավերի վրա: Դրան անմիջապես հետևում է ներողամտություն հայցող բացատրությունը. իբր, Բ. Դուռը լավ գիտե հետևանքների անխուսափելիությունը, բայց ստիպված է դիմել այդ քայլին, քանի որ «ժամանակին աճեցուն*

[20] *«Արևելք», 1888, 24 ապրիլի:*
[21] *«Արևելք», 1888, 25 ապրիլի:*
[22] *«Արևելք», 1884, 12 հունիսի:*
[23] *«Արևելք», 1884, 14 մայիսի:*
[24] *«Արևելք», 1884, 7 հոկտեմբերի:*

պահանջներն այլ ելք չեն թողած»[25]: Ավելին, թերթն արդեն հիմնավորում է եկամտահարկի բարձրացումը՝ ստանձնելով Բ. Դռան փաստաբանի դերը. Բ. Դուռը եկամտահարկը պետք է բարձրացներ ռազմական աճող ծախսերի պատճառով, ուստի և եկամտահարկի աճը միակ ելքն է, այլ՝ ավելի ծանր հետևանքներից խուսափելու համար, կարծում է «Արևելքը»:

Գրաքննության ուշադրությունը պետք է շեղեր «Արևելքի» մշակած մի այլ ոճը՝ կառավարության հարկային ամայացնող քաղաքականության իրական հետևանքների ցուցադրումը և, մյուս կողմից, նույն կառավարության «հայրախնամ» մտահոգությունները՝ հետագայում այդ հետևանքները վերացնելու նպատակով: Ահա քննադատության այդպիսի մի նմուշ. «Կարգ մը գավառներու մեջ արդի տրոց գանձումն իսկ մեծամեծ դժվարությանց մատնված է ժողովրդյան հետին թշվառության պատճառավ... Այնթապի, Ատանայի, Հաճընու, Մարաշի, Կեսարիո շրջակայներեն և ուրիշ բազմաթիվ վայրերե առնված աղեխարշ տեղեկությունք կըցուցնեն, թե այս գավառներու խղճալի ժողովուրդք թող տրոց վճարում, ուտելիք հաց անգամ չեն գտներ: Ուստի նույն շրջահայեցողությամբ, որով կայսերական կառավարությունը տրոց վրա հավելումներ ըրած է ելմտացույցին բացը գոցելու համար, հուսալի է, թե բացառապես արկածյալ (սովահար – Գ. Ս.) գավառներուն ժամանակ մը ներողամտություն ցուցվի, որպեսզի իրենց չքավոր վիճակը կանոնավորեն և աշխատելու կարող լինեն, իբրև առաջին պայման տուրք վճարելուն»[26]:

Այսուհանդերձ, «Արևելքը» մատը դնում է վերքի վրա՝ բացահայտելով կառավարության հարկային գիշատիչ քաղաքականությունը գավառներում: Ժամանակի ընթերցողի համար դա էր կարևորը, և ոչ թե լրագրական խուսանավումները, որոնք այսօր կարող են հետաքրքրել մամուլ-գրականություն փոխհարաբերությունների տեսանկյունից:

«Արևելքի» նյութերի մի ստվար մասն են կազմում Կ. Պոլսի ազգային իրականության, սահմանադրական ու եկեղեցակրթական հաստատությունների վերաբերյալ հոդվածները: Հետաքրքիր հարցադրումներով աչքի են ընկնում թերթի՝ տարբեր ժանրերով նյութերն Ազգային ժողովի գործունեության, պատրիարքարանի անցուդարձի և դրանց հասարակական նշանակության մասին: Հայ մամուլում առաջիններից մեկն «Արևելքն» էր, որ տալիս էր Ազգային ժողովի նիստերի հանգամանալի լրատվությունը՝ գրեթե մոտ ռեպորտաժի արդի ժանրին: Այստեղ հաղորդվում էին երեսփոխանների ելույթները, երկխոսությունները և այլն: Ընդ որում, երբեմն ուղղակի խոսքով, երբեմն՝ նկարագրական ու միջնորդավորված՝ լրագրողի խոսքով: Լրատվական այս ժանրը լայն տարածում գտավ նաև «Մասիսում»՝ Ա. Արփիարյանի ուշագրավ հրապարակումների ու մեկնաբանությունների ձևով: Թերթի առաջին էջում, որտեղ սովորաբար արտահայտվում էր նրա վարչության դիրքորոշումը, կան նաև քննադատական որոշ շերտեր՝ պատրիարքարանի ելմտացույցի (բյուջե), այս թեմայով հաշվետվությունների բնույթի վերաբերյալ: Այս կարգի մոտեցումներն ամենևին էլ արմատական ուղղվածություն

---

[25] *«Արևելք», 1888, 26 փետրվարի:*

[26] *«Արևելք», 1888, 9 մարտի:*

չունեն, այլ հիմնականում դրսևորվում են հենց Ազգային ժողովի բանավեճերի ընթացքում՝ նպատակ ունենալով կողմնորոշել երեսփոխաններին: Այսպես, «Ազգային ժողով և վարչություն» առաջնորդողում դիտողություններ են արվում սահմանադրության մեջ օրենսդիր (երեսփոխանական ժողով) և գործադիր (ազգային վարչություն) ժողովների իրավասության սահմանների ոչ հստակ լինելու մասին, ինչի հետևանքով, ինչպես կարծում է հեղինակը, խառնվում են դրանց գործողության սահմանները, մեկը ստանձնում է մյուսի դերը և այլն[27]:

Այսօր զուտ սահմանադրական իրավունքի պատմության տեսակետից հետաքրքրություն կարող են հարուցել «Արևելքի» քննարկումներն Ազգային ժողովի գործունեության կանոնակարգման, հարցման և հարցապնդումների սկզբունքի, Ազգային վարչության ու Ազգային ժողովի փոխադարձ իրավունքների և պարտականությունների վերաբերյալ: Մինչդեռ դրանք գործնականում հետաքրքրել են ժամանակի ընթերցողին, նպաստել հանրության կարծիքի ձևավորմանը կամ ուղղորդմանը: «Արևելքի» վարչությունը սովորաբար իր համամտությունն էր հայտնում ազատամիտների առաջարկներին: 1884 թ. թերթը պաշտպանեց ազատամիտների այն առաջարկները, որոնք վերաբերում էին Ազգային ժողովի գործունակությանը. սրանք կազմել էին, այսպես կոչված, «Հառաջադիմական միություն» խումբը, որին անդամակցում էին Մ. Չերազը, Կ. Սվաճյանը, Հովհ. Թորոսյանը[28]: Բնականաբար, խումբը խոսքերից այն կողմ չանցավ, սակայն, մեծ լրջություն դնելով այս ամենի մեջ, «Արևելքի» վարչությունն ապակողմնորոշում էր այդ նույն հանրությանը՝ նրան մոլորեցնելով փաստորեն ոչ գործունակ Ազգային ժողովի կարևորության մասին բարձրագոչ դատողություններով: Իսկ երբ խնդիրը վերաբերում էր Բ. Դռնից ժողովրդի սահմանադրական իրավունքները պաշտպանելուն, ապա «Արևելքի» վարչության հայցող ձայնը վերածվում էր շշուկի: Հիրավի, պատրիարք Ներսես Վարժապետյանի մահվանից հետո Ազգային ժողովը նշանակել էր պատրիարքական տեղապահ, սակայն ամիսներ շարունակ չկար նրա վավերացման վճիռը (բույրուլթու), որ պետք է ընդուներ Բ. Դուռը: Կ. Պոլսի Ազգային վարչության գործունեությունն այս պատճառով գրեթե կազմալուծվել էր, չէին գործում ազգային մարմինները: Այս առթիվ «Արևելքի» վարչության համարձակությունը՝ այդ մասին հիշեցնելու Բ. Դռանը, սահմանափակվեց այն անմիտ եզրակացությամբ, թե «կառավարությունն ադով (իր հապաղմամբ – Գ. Ս.) ազգին և եկեղեցվույն կենսական խնդիրներն երեսի վրա թողուլ չէ անշուշտ»[29]:

Նույն դիրքորոշումն ուներ «Արևելքի» վարչությունը, երբ նրա խմբագրականներում միանշանակ մեծարվում էին պատրիարքներ Հ. Վեհապետյանն ու նրան հաջորդած Խ. Աշրգյանը, նրանց գործելակերպն ազգային ու կրոնական հարցերում, ինչպես և օսմանյան կառավարության հետ ունեցած հարաբերություններում: Մինչդեռ նույն «Արևելքում» և «Մասիսում» ժողովրդավարների հրապարա-

---

[27] *«Արևելք», 1884, 1 օգոստոսի:*

[28] *«Արևելք», 1884, 14 հոկտեմբերի:*

[29] *«Արևելք», 1885, 24 հունվարի:*

կումներն այս թեմաներով առանձնանում են իրենց համարձակությամբ ու քննադատական ուղղվածությամբ:

«Արևելքը» հարուստ տեղեկատվություն է պարունակում Կ. Պոլսի հայերի կրթական, լուսավորական ու մշակութային խնդիրների վերաբերյալ: Թերթը «Ազգային լուրեր» խորագրի տակ մշտապես նյութեր էր տպագրում Կ. Պոլսի և հայաբնակ գավառների վարժարանների, թաղային ու մասնավոր դպրոցների, ուսուցման եղանակների, դպրոցական գործի բարելավմանն ուղղված՝ ազգային մարմինների գործունեության մասին: «Արևելքը» դրական դեր է ունեցել «Միացյալ ընկերությանց» վարժարանների մեջ ուսուցման որակները բարելավելու և առհասարակ այդ գործին աջակցելու հարցում: Այս ասպարեզում նկատելի է նրա քննադատական վերաբերմունքը հատկապես ընկերության գավառական վարժարանների գործունեության հանդեպ՝ նկատի ունենալով, որ ոչ կանոնավոր մատակարարության պատճառով դրանք հաճախ չեն հասնում սպասված արդյունքներին: Որպես ասվածի վկայություն, թերթը նկարագրում է Վասպուրականի և Մուշի դպրոցների ոչ բարվոք կացությունը, թեև առանձնացնում է մշեցի աշակերտների ակնառու հաջողություններն ուսման մեջ[30]: «Արևելքի» թղթակցություններում, Արփիարյանի քրոնիկներում և այլ հրապարակումներում կանոնավորապես տեղեկություններ են տրվում Պեզճյան մայր վարժարանի, Գատը գյուղի Արամյան վարժարանի, Լուսավորչյան և այլ հաստատությունների ուսման ընթացքի, քննությունների որակի, ուսուցիչների կացության ու գործունեության և այլնի մասին:

1870–1880-ական թվականներին Կ. Պոլսում թաղային հին վարժարանների (Կ. Պոլսում այս վարժարանները հիմնվել էին 1790-ական թվականների սկզբներից) կողքին և դրանց հետ միաժամանակ հաջողությամբ սկսել էին գործել մասնավոր վարժարանները: Վերջիններս աչքի էին ընկնում մանկավարժական նոր մեթոդների կիրառմամբ, եվրոպական առաջավոր փորձն արդյունավետ օգտագործելու հետաքրքիր ձեռնարկումներով, որոնք նորություն էին արևմտահայ մանկավարժության մեջ: «Արևելքում» առանձնացվում են Մեզպուրյան, Պերպերյան և Գուրգենյան մասնավոր վարժարանները, դրանց առավելությունները թաղային դպրոցների հանդեպ: Իսկ թաղային դպրոցների հետամնացությունը և պահպանողականությունը թերթը բացատրում է ազգային վարչության ու թաղերի հոգաբարձության անտարբերությամբ և հոգածության պակասով: «Արևելքում» բացահայտվում է թաղային վարժարանների՝ փաստորեն հասարակ մարդկանց դպրոցների արժեզրկման ընթացքը՝ դրամական միջոցների սղության պայմաններում: Թաղային վարժարաններում, նկատում է «Արևելքը», անտեսվում են բարոյական դաստիարակությունն ու կարգապահությունը: «Արևելքի» թղթակիցը գրում էր, որ միայն Գում-Գափուում բացվել են 4-5 ծաղկոցներ և նախակրթարաններ, որտեղ հավաքվել էին թաղական (հանրային) դպրոցներից հեռացած աշակերտներ[31]: Իրավացի էր թերթը, երբ նկատում էր, որ առաջադիմում են այն վարժարանները, որոնք գործում են անկախ և ազատ են մնում հո-

---

[30] *«Արևելք», 1884, 19 նոյեմբերի:*

[31] *«Արևելք», 1884, 11 սեպտեմբերի:*

գաբարձուների, այլևայլ պաշտոնյաների ու դրամատերերի վնասակար միջամտություններից: Մեզպուրյան վարժարանը, ինչպես գրում է թերթը, իր վարչության լուրջ աշխատանքի և հմտությունների շնորհիվ գերազանցել է Սկյուտարի Հոմ ամերիկյան վարժարանին ու շատ հայ ընտանիքներ այն գերադասում են նմանատիպ (գիշերօթիկ) մյուս հաստատություններից:

Ազգային վարժարանների թերի կողմերի բացահայտումներով ևս «Արևելքը» նպաստում էր դրանց գործունեության բարելավմանը: Հետաքրքիր է նրա էջերում հունական և հայկական դպրոցների համեմատությունը՝ ի վնաս վերջիններիի: Այստեղ վերհանված են հույների փայլուն հաջողությունները կրթական գործում. նրանք ունեն ուսուցիչներ և ուսյալ կղեր պատրաստող բարձրակարգ դպրոցներ, հայերը՝ ոչ, նրանք առավել հաջողությամբ են կազմակերպել տարրական ու միջնակարգ կրթությունը: «Արևելքը» շեշտադրում է կրթված ժողովուրդների տնտեսական առավելությունները, դրանց ազդեցությունը բնակչության աճի վրա: Հետաքրքիր է անգլիացի ոմն Վիլսոնի վիճակագրական տվյալների մեջբերումը մի հեղինակի կողմից. Այդընի վիլայեթում հույները վերջին քառասուն տարվա ընթացքում ավելացել են մի քանի անգամ, թուրքերի թիվը նվազել է, իսկ հայերի թիվը մնացել է անփոփոխ[32]:

«Արևելքի» թղթակիցները հանգամանալի տեղեկություններ են տալիս նաև գավառի հայ դպրոցների վիճակի, դրանց թերությունների և կարիքների մասին: Այս բնույթի հրապարակումներում առանձնացվում է խնդրի սոցիալական կողմը, երկպառակությունների և ունևոր խավերի կամայականությունների բացասական նշանակությունը դպրոցական գործի վրա: Դպրոցը դիտելով որպես ազգապահպանության կարևոր գործոն՝ «Արևելքը» ուշադրությամբ հետևում էր արևելահայ դպրոցների դեմ ուղղված ցարական իշխանությունների միջոցառումներին: Վերջիններիս գործելակերպը և վերաբերմունքը դպրոցական ասպարեզում՝ թերթը համարում է ոտնձգություն առհասարակ հայ եկեղեցու իրավունքների դեմ: «Արևելքի» հեղինակները բողոքում են ներքին գործոց նախարարության կողմից ռուս հոգաբարձություններին տրված լայն իրավասությունների դեմ, որը նրանց հնարավորություն էր տալիս հայկական դպրոցներում թելադրել իրենց կամքը: Քննադատվում է հատկապես այն, որ 1884 թ. գործող դպրոցական Կանոնադրության ուժով թեմական առաջնորդները կախման մեջ էին ընկել Կովկասի ուսումնական շրջանի հոգաբարձուից և Կովկասի կառավարչապետից (թեմական տեսուչների նշանակման և արձակման իրավունքով)[33]: «Վարժարանք հայոց ի Կովկասիա» հոդվածում «Արևելքը» քննադատում էր ռուսական իշխանությունների անզիջում կեցվածքն այն ժամանակ, երբ Ս. եպ. Պարզյանցին մերժվել էր հայ դպրոցները նախկին կարգավիճակում թողնելու խնդրանքը[34]:

---

[32] *«Արևելք», 1884, 21 օգոստոսի:*

[33] *«Արևելք», 1884, 30 հուլիսի: Կովկասի ուսումնական շրջանի հոգաբարձու Յանովսկին կատարում էր ռուսական հետադիմական բյուրոկրատիայի կամքը, երբ արքունական դպրոցներում ճգնում էր արգելել այլադավանների լեզվի և կրոնի դասավանդումը (տե՛ս Վ. Ե ր կ ա ն յ ա ն. Պայքար հայկական նոր դպրոցի համար Անդրկովկասում, Երևան, 1970, էջ 134):*

[34] *«Արևելք», 1885, 16 մարտի:*

«Արևելքը» վիճակագրական տվյալներով ցույց է տալիս, որ ռուսական իշխանությունները ծավալուն հարձակման են անցել հայ դպրոցների դեմ՝ առաջնորդվելով վերջիններիս պետականացման սկզբունքով[35]: Այս թեմայով ռուս մամուլից արված տեսություններով ևս «Արևելքը» սպառիչ լրատվություն էր տալիս Էջմիածնի սինոդի, հետագայում՝ Մակար կաթողիկոսի և իշխանությունների հակադրության՝ դպրոցական գործն ամբողջովին պետության վերահսկողության տակ դնելու քաղաքականության նպատակների մասին: «Արևելքը» կռահում էր այդպիսի քաղաքականության հետևանքները. Էջմիածնի իրավասության ներքո են մնալու Գևորգյան ճեմարանը և հոգևորական պատրաստող դպրոցները, իսկ ծխական ու միջնակարգ բոլոր դպրոցներն անցնելու են կառավարության տնօրինությանը: Ի վերջո, թերթը հայ դպրոցների պետականացման գործընթացը կապում է ռուսականացման ընդհանուր քաղաքականության հետ, որն իրագործվում է նաև Ռուսաստանի ազգային մյուս շրջաններում՝ Լեհաստանում, Ֆինլանդիայում և այլուր[36]: Նույն քաղաքականությունն էր նկատում «Արևելքը» Բալկաններում և եզրակացնում էր, որ այն ուղղվում է բուլղարների, սերբերի ու չեռնոգորցիների «ազգային և ցեղային ինքնության» դեմ:

Յարիզմի ազգային քաղաքականության դեմ ուղղված «Արևելքի» քննադատական կեցվածքը մասամբ մեղմվում էր և ազատվում միակողմանիությունից՝ կաթողիկոսական ընտրության առիթով Թիֆլիս և Էջմիածին մեկնած Ա. Արփիարյանի հետաքրքրական ու տաղանդավոր թղթակցությունների շնորհիվ: Իր «Կովկասյան ճանապարհորդությունը» հոդվածաշարում Արփիարյանը տալիս է արևելահայ կյանքի, կենցաղի, մշակույթի, մտավոր ու հոգևորական գործիչների իրական պատկերը և նկարագիրը, միջավայրն ու առօրյան՝ կենդանի գծերի շնորհիվ արևմտահայ ընթերցողի աչքերի առջև բացվում էր անչափ ուշագրավ և, փաստորեն, մինչ այդ շատ կողմերով անծանոթ մնացած իր եղբայրակիցների կյանքն ու միջավայրը, մտավոր ու մշակութային դեմքը: Արևելահայ իրականության նկարագիրը և դրան զուգակցվող բնութագրերը, որպիսիք լեփ-լեցուն են «Արևելքի» էջերում, պետք է համարել այդ թերթի բերած ամենակարևոր նորություններից մեկը Օսմանյան կայսրության մեջ հրատարակվող հայ մամուլի ու լրագրության պատմության մեջ: Այս ուղղությունը, որ բացում էր «Արևելքը», մեծապես նպաստում էր ազգային ինքնաճանաչողության ու ինքնագիտակցության խորացման գործընթացին և ուներ համազգային նշանակություն:

Հայ մամուլի պատմության մեջ «Արևելքը» նորույթ էր բերում նաև նորագույն հայ գաղթականության հետ կապված լուսաբանումների առումով. առաջին անգամ այս թերթում է հետևողականորեն ներկայացվում ԱՄՆ գաղթած հայերի կյանքը, նրանց տնտեսական ու մտավոր վիճակը, ինչպես և առհասարակ ամերիկյան միջավայրը, որտեղ բարեկեցության խաբուսիկ պատրանքներով հայտնվել էին իրենց հայրենիքը թողած այդ մարդիկ: Բոստոնում, Նյու Յորքում, Մասաչուսեթսում ապրող հայերի մասին «Արևելքին» հիմնականում թղթակցում

---

[35] *«Արևելք», 1885, 25 մարտի:*

[36] *«Արևելք», 1885, 11 մարտի:*

էին Մ. Թոփհանելյանը և Հ. Էկինյանը[37]՝ լայն հայեցվածքի տեր լրագրողներ, որոնք փորձում են կարևոր տեղեկություններ տալ նոր աշխարհում հայտնված հայ գաղթականների վերաբերյալ: Թղթակիցների գրչի ներքո ուրվագծվում են գաղթականները Բոստոնում և Ուստերում (Մասաչուսեթս), նրանց կյանքը, զբաղմունքը, տնտեսական դժվարությունները, սոցիալական ու անհատական կացությունը: Հ. Էկինյանի թղթակցությունները և հոդվածները հատկապես աչքի են ընկնում իրենց ճանաչողական լուրջ նշանակությամբ՝ սկսած գաղթականների կյանքի մանրամասներից և վերջացրած նրանց ներկայի ու ապագայում սպասվող վիճակների նրբամիտ վերլուծություններով: Հեղինակը նշում է, որ հայերը Ջերսի Սիթիում աշխատող բանվորների ամենաթշվառ և անօգնական մասն են, անտերունչ ու մատնված պատահականությունների տարերքին: Նրանք աշխատում են օրական 10–12 ժամ, իբրև լվացարար, խոհարար, սնագործ բանվոր՝ չնչին աշխատավարձով (4–5 դոլար օրական): Հայերը ցրված են Կալիֆորնիայում, Մասաչուսեթսում, Չիկագոյում, Նյու Յորքում, Պենսիլվանիայում, Նյու Ջերսիում և այլուր: Հ. Էկինյանն արժեքավոր տեղեկություններ և վիճակագրական տվյալներ է հայտնում գաղթականների՝ հայրենիքի մասին. նրանք հիմնականում եկել են Խարբերդից, Մարաշից, Դիրարբեքիրից և Կ. Պոլսից: Ուշագրավ է նոր կազմավորվող գաղթօջախի երերուն նկարագիրը. Նյու Յորքում կան մի քանի հայ վաճառականներ, երկու գործարանատերեր, որոնք ինչ-որ չափով փորձում են աշխատանքով ապահովել հայրենակիցներին[38]:

Մ. Թոփհանելյանը ներկայացնում է մորմոնների քարոզչության ավերումները. նա օսմանյան իշխանությունների ուշադրությունն է հրավիրում այն բանի վրա, որ մորմոնները ԱՄՆ-ում թուրքերին համարում են վայրենիներ: Հեղինակի մտքերը ստանում են գործնական ընթացք, երբ իշխանություններին հուշում է, որ մորմոնները գործում են Եգիպտոսում և Պաղեստինում[39]:

Մ. Թոփհանելյանի հրապարակումների մեջ նկարագրվում են ամերիկյան միջավայրը, ամերիկացիների կենցաղը, աշխատանքը, նրանց կրթվածության չափը, պետական կարգը և այլն[40]: Ներկայացնելով ԱՄՆ-ում գաղթական հայերի ծանր վիճակը՝ «Արևելքը» ձգտում էր կանխել անտեղյակ գաղթականների հոսքը դեպի այդ երկիրը, բաց անել հայրենակիցների աչքերը՝ տեսնելու «ավետյաց երկիրն» այնպես, ինչպիսին էր այն իրականում: Այսպես, Հ. Էկինյանը գրում է. «Ամերիկան ծուղակ մ՚է անտեր աղքատին համար, որուն մեջ բռնվելե դժվար է անվ-

---

[37] *Հ. Էկինյանն ամերիկահայ լրագրության մյուս ականավոր դեմքն է Խ. Օսկանյանից հետո: 1880-ական թվականների կեսից նա թղթակցել է «Արևելքին», իսկ 1888-1921 թթ. Ջերսիում, Նյու Յորքում և Ֆրեզնոյում խմբագրել է «Արեգակ», «Սուրհանդակ», «Ազատություն», «Տիգրիս», «Քաղաքացի», «Նոր սերունդ» և «Նոր կյանք» պարբերականները: Դրանք Ամերիկայում հայ գաղթօջախի լինելության, նրա տնտեսական ու հոգևոր կյանքի ուշագրավ տարեգրությունն են, որ շատ դեպքերում ունեն սկզբնաղբյուրի նշանակություն (տե՛ս* Գ. Լ ե ո ն յ ա ն. *Հայոց պարբերական մամուլը, Երևան, 1934, 201, 214, 215, 259, 293, 482, 483 և 685 թվահամարները):*

[38] *«Արևելք», 1885, 30 մարտի:*

[39] *«Արևելք», 1885, 9 մայիսի:*

[40] *«Արևելք», 1884, 4 օգոստոսի, 7 դեկտեմբերի, 1885, 28 փետրվարի, 12 մարտի և այլն:*

նաս ազատիլ»[41]: Բավականաչափ ազդու է Մ. Թոփհանելյանի մի թղթակցությունն Ուստրը գաղթած խարբերդցի հայերի կողմից Կ. Պոլսի պատրիարքին հղած մի նամակի առթիվ: Գաղթականները պատմում են ԱՄՆ-ում իրենց հուսախաբության, ակնկալած բարեկեցության փոխարեն այնտեղ թշվառության գիրկն ընկնելու մասին, նշելով, որ այժմ մի կերպ ապրում են իրենց ազգակիցների ողորմածությամբ: Լսելով, որ Խարբերդում ևս 100-ի չափ հայեր են հավաքվել՝ խաբվելով Ամերիկայի մասին ստապատիր խոսքերից, նրանք պատրիարքին խնդրում են արգելել անտեղյակ մարդկանց մեկնելը, որպեսզի նրանք ևս չընկնեն իրենց նման «թշվառ և հուսահատ» վիճակի մեջ: Հետաքրքիր է, որ Թոփհանելյանը մատնանշում է միամիտ մարդկանց գաղթելու մղող և գաղթը կազմակերպող անձանց՝ բողոքական որոշ միսիոներների և հայ ու հույն ձեռներեցների, որոնք բավական գումարներ էին վաստակում այդ դժբախտներին խաբելով և բնավեր դարձնելով:

Ամերիկա ձգվող գաղթականության դեմն առնելու իր փորձով և հայ գավառացիներին ճշմարտացի լրատվություն տալով «Արևելքն» իրականացնում էր հասարակական կարծիք ձևավորելու իր դրական դերը: Անտարակույս, ո՛չ «Արևելքը» և ո՛չ էլ մի որևէ այլ պարբերական չէր կարող կասեցնել գաղթականության այս շարժումը, բայց և չի կարելի բացառել այն բարերար ներգործությունը, որ պետք է ունենար «Արևելքի» քարոզչությունն այս ասպարեզում:

«Արևելքի» բերած նորույթների մեջ, այսուհանդերձ, ամենակարևորներից մեկը մնում է ռեալիստական գրականությանն ու գրաքննադատությանը բերած նրա նպաստը: «Մասիսի» հետ այս թերթը 1880-ական թվականներին նշանավորվում էր հայ գրականության մեջ ռեալիզմի զարգացման քարոզով, ինչպես և դրա տեսական հիմնավորմամբ[42]: Իրականության ճանաչողության ռեալիստական սկզբունքներն այս պարբերականներում նշանակում էին ազգային միջավայրի, բարոյականության ու բարքերի բացահայտման նոր փուլ՝ սրանց գեղարվեստական վերարտադրության, ճշմարտացի ցուցադրման միջոցով: «Արևելքում» հանդես էր գալիս գրողների ու գրականագետների նոր սերունդը. Ա. Արփիարյան, Գր. Զոհրապ, Մ. Կյուրճյան, Տ. Կամսարական և ուրիշներ, որոնք նոր հուն բացեցին ազգային գրականության ու նրա գեղագիտական նշանակության վերաբերյալ պատկերացումներում: Ա. Արփիարյանը գրական նոր սկզբունքների հայտնությունն իսկ պայմանավորում էր հասարակության գեղագիտական պահանջմունքներով, նշելով, որ «Հարկը բանաստեղծի ծնունդ կու տա»: Ռաֆֆու գրականությունը դրա ծնունդն է, հարում է նա, որովհետև «...ժողովուրդի մը սիրտը, միտքը և տրամադրությունքը ճանապարհ հարթած էին»[43]: Արփիարյանը գրականությունն օժտում է նաև դեպի ընթերցողն ուղղված հակադարձ ընթացքով, հասարակական ներգործության իր մեծ ուժով: Բնութագրելով Ծերենցի դստեր՝ Թ. Մելիք-Ազարյանի ստեղծագործությունը, նա գրում է, որ «Մեր ժամանակը կաթոգին սիրով կսիրե այն վիպասանությունը, որ խորագնին աչքով, գթա-

---

[41] *«Արևելք», 1885, 30 մարտի:*

[42] *Տե՛ս Ս. Ս ա ր ի ն յ ա ն. Հայոց գրականության երկու դարը, գիրք II, Երևան, 1989, էջ 90:*

[43] *«Արևելք», 1884, 12 հուլիսի:*

լիր սրտով կքննե մեր հոգեկան պետքերը, կորոնե մեր ցավոց պատճառները»[44]: Հատկապես ուշագրավ է վեպի (նաև նորավեպի) գրական նշանակությունը Արփիարյանի գնահատմամբ, որ հանգում է բուն ժողովրդի կյանքի օգտավետ, հիմնական ու խորքային պատկերմանը, և որն արձակի ժանրն առաջատար է դարձնում իր լայն ընդգրկումների տեսակետից[45]: Հատկանշական են Արփիարյանի մոտեցումները գրական լեզվի, ոճի, գրականության գեղագիտական արժեքի, ժամանակի գրականության զարգացման ընթացքի վերաբերյալ, որոնք բավական խոր վերլուծության են ենթարկվել, ի դեպ, հայ գրականագիտական մտքի կողմից: Հատկապես հետաքրքիր են Տ. Կամսարականի «Վարժապետին աղջիկը» վեպի մասին «Արևելքի» էջերում արտահայտված կարծիքները, որոնք 1880-ականների վերջերում, փաստորեն, հանրագումարի էին բերում ռեալիզմի, որպես գրական ուղղության նշանակությունը արևմտահայ կյանքում: Նախ, «Արևելքը» տպագրեց Տ. Կամսարականի «Ո՞րն է իրական վեպն» հոդվածը[46], որտեղ հեղինակը, բանավիճելով Ե. Տեմիրճիպաշյանի հետ, ըստ ամենայնի շարադրում է ռեալիստական վեպի բովանդակության ու գեղագիտական արժեքի վերաբերյալ գրական նոր շարժման ըմբռնումները: Կամսարականն առաջիններից մեկն էր, եթե չասենք առաջինը մեզանում, որ հստակ տարբերում էր ռեալիզմը (իրապաշտություն) և՛ ռոմանտիզմից (տեսլականություն), և՛ նատուրալիզմից (նյութապաշտություն)[47]: Իրականության և մարդու հոգևոր-բարոյական հարստությունն ու խորքերը պատկերելու տեսակետից Կամսարականն առավել արդյունավետ է համարում ռեալիստական գրականությունը: Ի. Թենի ռոմանտիկական գեղագիտական որոշ դրույթների օգտագործումն ինչ-որ տեղ հակասականություն է ստեղծում Տ. Կամսարականի գեղագիտական պատկերացումների մեջ, բայց չի խաթարում նրա պաշտպանած սկզբունքների համոզչությունը: Կամսարականի դեմ առարկություններով հանդես եկավ Բ. Քեչյանը, սակայն դրանք ավելի շատ վերաբերում են Զոլայի նատուրալիզմին[48]: Ի պաշտպանություն հայ գրականության ռեալիստական ընթացքի, «Արևելքում» տպագրվեցին Հ. Մեղավորի, Լ. Բաշալյանի և այլոց հոդվածները:

«Արևելքի», ինչպես և «Մասիսի» ռեալիստ հեղինակները իրականության և առհասարակ հայրենիքի ճանաչողության դիրքերից էին կիրառում նոր լրագրության սկզբունքները: Պատահական չէ, որ 1880-ական թվականների արևմտահայ լրագրության զարգացումը և՛ բովանդակային, և՛ ժանրային տեսակետներից իր լիարժեք դրսևորումները գտավ «Արևելքի» և «Մասիսի» էջերում:

---

[44] *«Արևելք», 1885, 2 մարտի:*

[45] *«Արևելք», 1888, 1 սեպտեմբերի:*

[46] *«Արևելք», 1888, 12 մայիսի:*

[47] *Ակադեմիկոս Ս. Սարինյանը նկատի ունի ռեալիստական գեղագիտության այս ուղղվածությունը, երբ գրում է, որ այն «...մերժում է իրականության նատուրալիստական արտացոլումը» (տե՛ս Ս. Ս ա ր ի ն յ ա ն. Ռեալիզմի և ժողովրդայնության հարցերը 70–80-ական թթ. արևելահայ գրական քննադատության մեջ.– ՀՍՍՌ ԳԱ «Տեղեկագիր», 1955, №4, էջ 67):*

[48] *«Արևելք», 1889, 8 օգոստոսի:*

КОНСТАНТИНОПОЛЬСКАЯ ГАЗЕТА “АРЕВЕЛК” (1880-е годы)

ГАЯНЕ СОГОМОНЯН

Р е з ю м е

В 1880-х годах изданием газеты “Аревелк” (“Восток”) начинается новый этап западноармянской журналистики. Пресса уделяет особое внимание Западной Армении: экономическая и общественная жизнь армянского населения, его быт, нравы, бесправное положение, угнетение со стороны курдской верхушки, злоупотребления османских властей в отношении армян – всё это становится главной темой журналистского освещения. В соответствии с этим газетная информация приобретает актуальные жанровые формы, в которых акцент делается не на причине (в условиях гамидовской цензуры это было невозможно), а на следствии того или иного явления. Прогрессивные идеи “Аревелка” выражались в публикациях писателей-демократов А. Арпиаряна, Гр. Зограба, Т. Камсаракана, М. Кюркчяна и их единомышленников.

THE NEWSPAPER “THE AREVELK” OF CONSTANTINOPLE (The 1880s)

GAYANE SOGHOMONYAN

S u m m a r y

The new phase of the Western Armenian journalism started in the 1880s with the publication of the newspaper “The Arevelk.” Much attention was paid to the economic and social life of the Armenian population which was under the pressure of the Ottoman authorities. Accordingly, press information acquired actual forms, through stressing the consequence of any phenomenon and not its cause (because of the Ottoman censorship). The progressive ideas of “The Arevelk” were expressed in the publications of A. Arpiaryan, G. Zohrab, T. Kamsarakan, M. Kyurkchyan and others.